**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՊՐԱՆՔՆԵՐԻՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2**

ք.Երևան «05» «օգոստոսի» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, իդեմսծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»),մի կողմից, և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն Էմին Մարտիրոսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.05.2020թ.. կնքված NՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԱՐԴ1/0704/02/18 քաղաքացիական գործով կայացրած վճիռը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը ընդունել է «Տեքսուրդ» ՍՊԸ-ի կողմից 2017թ.-ին մատակարարված 1175 լրակազմ «տղամարդու կոստյում դատապարտյալի» ապրանքատեսակի խմբաքանակը, որը պահպանվում էր ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական պահեստում: Հաշվի առնելով նշվածը և այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 2020թ.-ի կարիքների համար դատապարտյալի կոստյումի պահանջարկը նվազել է, ուստի Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 1-ին չափաբաժնով նախատեսված 1500 հատ «կոստյումներ (դատապարտյալի)» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 1000 հատով և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը նշված ապրանքից մատակարարել 500 հատ քանակով, իսկ նվազեցվող գումարի՝ 8200000 (ութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը, 2020թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարել Պայմանագրով նախատեսված այլ տեսակի ապրանքներ, մասնավորապես՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները ավելացնել հետևյալ քանակներով՝

1)«շապիկ (տղամարդու, դատապարտյալի)» ապրանքատեսակի քանակը ավելացնել 2000 հատով, որի գումարը կազմում է 1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ,

2) «վարտիք (տղամարդու, դատապարտյալի)» ապրանքատեսակի քանակը ավելացնել 2000 հատով, որի գումարը կազմում է 960000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,

3) «սավաններ» ապրանքատեսակի քանակը ավելացնել 2020 հատով, որի գումարը կազմում է 2828000 (երկու միլիոն ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ,

4) «բարձերեսներ» ապրանքատեսակի քանակը ավելացնել1220 հատով, որի գումարը կազմում է 732000 (յոթ հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ,

5) «սրբիչներ, բամբակյա» ապրանքատեսակի քանակը ավելացնե 4300 հատով, որի գումարը կազմում է 2580000 (երկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Վերը նշված հինգ տեսակի ապրանքների ավելացվող գումարը կազմում է 8200000 (ութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.2 Պայմանագրի ընդհանուր գումարը մնում է անփոփոխ, որը կազմում է 27030000 (քսանյոթ միլիոն երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/2» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության՝
Ա.Ղազարյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711

Գլխավոր տնօրեն՝
Է.Մարտիրոսյան

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ